

ՄԻ ՔԱՆԻ ՎԻՄԱԳԻՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ս. Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Չափածո ստեղծագործությունների ընդհանուր շղթայում իրենց թեմատիկայով, բանաստեղծական յուրօրինակ մտածողությամբ ու պատկերավորությամբ առանձնանում են վիմագիր բանաստեղծությունները: Այսպես կոչված՝ բանաստեղծական մտածողության, տեխնիկայի կատարելության առումով դրանք, անշուշտ, էապես զիջում են բուն ստեղծագործություններին, բայց ինքնատիպ թեմատիկայով և, մանավանդ, սյուժեի ողբերգական տարրի առումով միանգամայն ուշագրավ են և արժանի հատուկ քննության: Այդօրինակ ստեղծագործությունների նյութը հիմնականում ազգային ավանդների պահպանության համար պայքարող, դավանական անհամաձայնությունների համահարթման դեմ ըմբոստացող, կրթական-մշակութային գործը սատարող, բռնություն-անօրինությունների դեմ ըմբոստացող հայ անհատի կյանքն է՝ միջավայրին հատուկ հոգեբանությամբ ու գործելակերպով: Արդ քննենք այդ ստեղծագործություններից մի քանիսը: Այսպես, օրինակ, քսանամյա ոմն Հարություն՝ «չարի ինչ հանդիպեալ», հարկադրաբար հավատափոխ է լինում, իհարկե, բնավ չգիտակցելով կատարվածի ծանրությունը.

Մալղարայու յերկրին ծնեալ
Եւ Յարութիւն անուն կոչեալ,
Որոյ չարի ինչ հանդիպեալ՝
Զհաւատ իւր ալլափոխեալ՝:

Չափահաս դառնալով, նա գիտակցում է հավատափոխության վտանգն ու հետևանքները: Նա երկար մտաւտանջվում է, ի վերջո դիմում է. Պոլսի հոգևոր առաջնորդին և խնդրում իրեն փրկել մոլորությունից: Կատարվում է Հարությունի բաղձանքը, և նա վերադառնում է իր ծննդավայրը՝ Մանիսա քաղաքը.

Սրտի մտօք առ տէր դարձեալ,
Գլորեալ անձն անդէն կանգնեալ,
Եւ վերստին խոստովանեալ,
Ի նոյն վիմին անշարժ կացեալ՝:

Սակայն, շատ չանցած, նա մատնությունամբ ընկնում է իսլամի մոլեռանդ սպասավորների ձեռքը.

Յանօրինաց ձեռսն մատնեալ,
Յարգելանոց չորս օր բանտեալ,

1 Վ. Թորգոմյան, Հայ բժշկական արձանագրաբանություն, Վենետիկ, 1931, էջ 64:

2 Նույն տեղում, էջ 64:

Չարչարանօք յոյժ վշտացեալ,
Յետոյ սրով գլխափառեալ...³

Այս բանաստեղծության հրատարակիչ Հնասերը (Մանուկյան) նահատակված պատանու մասին ծանուցում է. «Կվերաբերի Մանիսայի մեջ նահատակված մալկարացի Հարություն անուն քսանամյա երիտասարդին, որ թրքացած է (անշուշտ բռնությամբ) ու հետո իր հավատին վերադարձած ըլլալուն համար գլխատված»⁴։ Իրողությունն այն է, որ օսմանյան կայսրության մեջ նմանօրինակ փաստերը եղակի չեն եղել։ Բանաստեղծությունը հորինվել է 1833 թ., պատանու ողբերգական մահվան տպավորության տակ։

Նման բովանդակությամբ բանաստեղծություն է հորինվել 1806 թ., կարենցի Հարությունի նահատակման առթիվ։ Իրերի դժբախտ բերումով, Հարությունը անհավատների կողմից ենթարկվում է անասելի տանջանքների։ Նրան ստիպում են ուրանալ ազգն ու հայրենիքը։ Պատանին հրաժարվում է, որի համար էլ անլուր տառապանքներ է կրում և, ի վերջո, նահատակվում իբրև «մարտիկ գերակայ»։

Ի քաջից խուժաց տաան օր հարուածեալ,
Քաղցու տուայտեալ ի ճենճերս ածեալ,
Վիզոլոր գելեալ, տաշտատապ խանձեալ,
Յատրաշեկ ի թելս ընդ (գաղայնս) փորձեալ.
Ոտնակոխ լլկեալ վշտըմբեր վըկայ,
Խաշազգեաց զինուոր՝ մարտիկ գերակայ...⁵

Քննարկման, ֆիզիկական բնաջնջման վտանգը մշտապես կախված էր քրիստոնյանների, առավել ևս՝ հայ ժողովրդի գլխին։ Օսմանյան կայսրության տարածքում ապրող ժողովուրդների համար այնպիսի դժոխային պայմաններ էին ստեղծվել, որ նրանք «իրենց տուն և բնակություն թողնվ՝ ցիր ու ցան եղած անհովիվ ոչխարի նման աշխարհիս երես սփռված են»⁶։

Մոտավոր նմանությամբ նույն հենքն ունի նաև 1768 թ. Զմյուռնիայում վիճագրված մի բանաստեղծություն՝ նվիրված ոմն Ստեփաննոսի։ Բանաստեղծության հերոսը ծնվել է Նախճավանի Նախաջուր գյուղում, հալածվել ալլադավանների կողմից, ի վերջո, հեռացել հայրենի երկրից և հասել Զմյուռնիա ու կնքել իր մահկանացուն։ Հալածվողը կորցնում է ոչ միայն հայրենի երկիրը, ունենում ծանր հոգեկան ապրումներ, այլև փախուստի ժամանակ ժայռից ընկնելով ֆիզիկապես խեղանդամվում է։

Չար թշնամեաց սա հալածեալ,
Բարձրաբերձէ ի վայր անկեալ,
Անդէն բոլոր անձամբ հաշմեալ,
Խեղ ու թօփալ մականուանեալ...⁷։

³ Նույն տեղում։

⁴ Քաղմավէպս, 1931, էջ 325։

⁵ Հ. Քոսյան, Հայք ի Զմյուռնիա և ի չրչակայս, հ. Ա, Վիեննա, 1899, էջ 93։

⁶ Պ. Նաթանյան, Արտուր Հայաստանի, Կոստանդնուպոլիս, էջ 182։

⁷ Հ. Քոսյան, Հայք ի Զմյուռնիա և ի չրչակայս, հ. Ա, Վիեննա, 1899, էջ 93։

Այդ նահատակների կյանքն արտացոլող վիմագիր բանաստեղծությունների շարքում իր ուրույն տեղն ունի Հովակիմ Թավուքչյանի հիշատակին ձեռնված ստեղծագործությունը։ Հովակիմը մահապատժի է ենթարկվել 1843 թ.՝ թաթարների ձեռքով։ Մահապատժը տեղի է ունեցել Կ. Պոլսի, այսպես կոչված, Պալլադ բազարի դռան առջև՝ ամբոխի ներկայությամբ։ Այս ստեղծագործությունը յուրահատուկ ողբ է՝ համեմատ գեղարվեստական անպաճույճ պատկերներով, որոնք ատելությամբ են համակում ընթերցողին՝ ընդդեմ մարդատյացության։

Պատանին նախ ենթարկվում է բազում փորձությունների. նա ջանում է «մարտ տալ» ընդդեմ չարի ու բռնության, սակայն «դահիճ վարէր զանմեղն ի մահ»։ Հովակիմ Թավուքչյանի «հանցանքն» այն էր, որ նա հրաժարվել էր ուրանալ իր աղզն ու հայրենիքը, հավատը, որի համար ֆիզիկապես դատաստան են տեսնում նրա հետ։ Սակայն պատանի Հովակիմը զոհվում է հերոսաբար, տանելով բարոյական հաղթանակ. նա չի աղերսում խնայել իր կյանքը, չի կատարում դահիճ մարդասպանների պահանջներն ու թելադրանքները։ Նա «լուրջ դիմօք» ծունր է դնում՝ պատրաստ ընդունելու մահը.

Շողաց սուսերն, երիցս եհար ըզծոծրակ...⁸

Սակայն պատանու մահն անգամ հագուրդ չի տալիս արյունարբու դահիճներին. նրանք բարբարոսաբար գլխատված երիտասարդի դին նետում են ծովը.

Կապեալ վէմ մեծ զմարմին ի ծով ընկեցին,
Ամպրոպայոյզ ջուրք իբր ի ցաւս երկնեցին,
Ի թաթառաց խռովեալ անդունդն ալեաստ՝
Ձանգլուխ աւանդն բերեալ մատոյց յեզերս աստ⁹։

Կատարվածի առիթով բնության անհանգիստ ու խռովահույզ տարերքը նկարագրելով, ավելի ճիշտ՝ ողբերգության դեմ բնության ընդվզումը պատկերելով, հեղինակը շեշտել է ոճրի ծանրությունը։ Բանաստեղծությունը խորապես հուզիչ է ու ապրեցնող, լի դրամատիկ պահերով. ամեն մի տողը տպավորություն է ստեղծում իր ուժգնությամբ ու պատկերավորությամբ, մտահոգում պատանու ճակատագրով։ Նրա հերոսական մահվան դրվագները միշտ էլ «խրախոյս» են դարձել ապրողներին.

Որ գայ շիրմի նահատակիս այցելու՝
Առցե խրախոյս և յիշեսցէ ակնածու...¹⁰

Բռնակալները ահ ու սարսափի մեջ պահելով անդին ժողովրդին, դարեր շարունակ հարստահարել են նրան, ձգտելով մեռցնել ազգային ոգին ու ինքնագիտակցության ձգտումը։ Եվ այդ տևական բռնությունները երբեմն կարո-

⁸ «Բաղմավէպ», 1934, էջ 168։

⁹ Նույն տեղում։

¹⁰ Նույն տեղում։

դացել են կոտորել որոշ գավառների հայ բնակչության ազատատենչ ոգին, խափանել նրանց համատեղ պայքարի այս կամ այն փորձը:

Վկայութիւններ կան այն մասին, որ օսմանյան կայսրութիւնում այլադավանութեան և այլ պատճառներով առաջացած հալածանքները, անմարդկային ձևերով և միջոցներով տանջելն ու մահապատժի ենթարկելը ոչ միայն չեն կանխվել ու պատժվել, այլև պետականորեն հովանավորվել են:

Հայկական նահանգներում «ամեն օր հրացան կպարպեն եւ բան ըսող չկա, ավազակութիւն կընեն, ընտրող և հարցնող չկա, մարդասպան են՝ հըսկող պաշտոնեւորութիւն չկա...»¹¹: Քրիստոնյա ժողովուրդներին ամեն տեսակ ճնշումների ենթարկողները «ունին իրենց գլուխ աղաներ, պեկեր, այսինքն իրենց ձեռնարկութեանց մեջ զիրենք խրախուսող և պաշտպանող արյունկզակ դահիճներ, մարդակերպ գազաններ»¹²: Ուլքեր հանդգնել են իրենց բողոքի ձայնը բարձրացնել, պատժվել են կամ էլ՝ գլխատվել հրապարակաւ: Այս առումով ուշագրավ է սամաթիացի (Վ. Պոլիս) Հակոբի 1807 թ. ողբերգական նահատակման հանգամանքները պատկերող վիճագիր բանաստեղծութիւնը: Հակոբը Մշո ս. Կարապետ վանքի և Կարնո հոգևոր առաջնորդն էր: Նա ոչ միայն հալածվում է, այլև զանազան ամբաստանութիւններով «Յարգելանոց բանտս նետի»: Սակայն ո՛չ բանտը, ո՛չ էլ բռնութիւնները չեն կարողանում ընկճել նրա անկոտրում կամքը: Թեև Հակոբին հաջողվում է ազատվել բանտարգելութիւնից, սակայն վերադարձի կես ճանապարհին, Մուշից ոչ հեռու, «Սահակայ ձորակի» մեջ նա կանխամտածված սպանութեան զոհ է դառնում: Ահա կատարվածի չափածո նկարագրութիւնը.

Բայց սուրբ տեղիս շհասանի,
Մինչ Սահակայ ձորակ մտեալ՝
Ի նենգողացն ընդհարեալ,
Սրախողխող մարմնովն լեալ,
Կսկծալի մահուամբ մեռեալ,
Կոծով մեծաւ ի յաստ բերեալ,
Ի գերեզման մահու եղեալ...¹³

Այս եռանդուն ու արիասիրտ մարդու գործունեութիւնը, անշուշտ, երկյուղ է պատճառել նրա հակառակորդներին, և նրանք դավադրաբար դատաստան են տեսել Հակոբի հետ:

Հակոբի ողբերգական մահվան նկարագրից բացի, վիճագիր այս բանաստեղծութեան մեջ ակնարկվում է նաև օսմանյան կառավարութեան ծրագրված քաղաքականութիւնը ընդդեմ Արևմտյան Հայաստանի, կառավարութիւն, որը հայ ժողովրդի կրթական-մշակութային կենտրոնները դարձնում էր հարկատու, ստեղծում կախյալ ու կաշկանդված վիճակ¹⁴: Առանց օսմանյան կայսրութեան հատուկ թույլտվութեան հայերը և առհասարակ քրիստոնյա ժողովուրդները իրավունք չունեին ոչ միայն եկեղեցիներ ու կրթական օջախներ կառուցել,

¹¹ Պ. Ն ա թ ա ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 49:

¹² Նույն տեղում:

¹³ Հ. Ք ո ս յ ա ն, Բարձր Հայք, հ. Ա, էջ 115—116:

¹⁴ Շ Հ ա յ ժ ժ ղ ո վ ղ ի պատմութիւն, հ. V, Երևան, 1974, էջ 108:

այլև կատարել նորոգչական աշխատանքներ¹⁵։ Ահա այդ հարկատու հայոց նշանավոր վանքերից մեկի մասին է ակնարկվում վերոհիշյալ բանաստեղծության մեջ։

Օսմանյան կայսրությունում, բացի կրոնական ու ազգային հալածանքներից, մշտապես դավեր էին նյութվում նաև հայ երևելի անձանց նկատմամբ, նույնիսկ նրանց, ովքեր կարողացել էին իրենց գործունեությամբ բարձր դիրք և հեղինակություն ձեռք բերել ինչպես երկրի պետական կառավարման, այնպես էլ արվեստի ու մշակույթի բնագավառում և, բնականաբար, օգնել կրթական գործի կազմակերպմանը, նպաստել ընդհանուր առաջընթացին։ Նման երախտավորների հիշատակին են ձոնված հետևյալ տողերը.

Գիտուն միտք, վեհ հոգի, սիրտ անգին,
Ինչքն ու զինք նուիրեց իր ազգին՝
Լոյս ուսման տարածեց անդադար...¹⁶

Կամ՝

Կյանքիդ օրերը շինայելով՝
Ինչքդ, ստացուածքդ ազգին զոհելով՝
Դու աղբիւր եղար ծարաւիներուն,
Ու պատսպարան՝ կարոտեալներուն...¹⁷

Ինչպես հայտնի է, օսմանյան կայսրության մեջ իր գործունեությամբ բարձր դիրքի էր հասել Տուզյանների տոհմը։ Միքայել Տուզյանը սուլթան Մուսթաֆա Գ-ի օրոք կարգված էր կայսրության փողերանոցի վերատեսուչ։ Այդ նույն պաշտոնին հետագայում սուլթան Մահմուդ Բ-ի օրոք կարգվում է նաև Միքայել Տուզյանի թոռը՝ Գրիգոր Տուզյանը։ Բայց Գրիգորը դառնալով զորպարտությունների ու բանսարկությունների ղոհ, ենթարկվում է մահապատժի. նույն բախտին են արժանանում նաև նրա եղբայրները՝ Սարգիսը, Միքայելը, ինչպես և հորեղորոր որդին՝ Մկրտիչը։ «1819 թ. օգոստոսի 27-ին էր այդ սև օրը... Գրիգոր Չելեպի և եղբայր Սարգիս Չելեպի խարդավանոք կբանտարկվին արքունի փողերանոցի մեջ. հոկտեմբերին 2-ն ալ կգլխատվին Պապը Հիւմայունի առջև, մինչ իրենց մյուս եղբայրը՝ Միքայել և հորեղորորորդին՝ Մկրտիչ Չելեպիները Տուզյանց Դուրուշեշմե Յովելյանց՝ տպարանին պատուհաններեն կկախվեն...»¹⁸։

Տուզյանների այս եղբրական նահատակման պատմությունը դարձել է բանաստեղծության նյութ։ Ահա Միքայել Տուզյանին նվիրված մասը.

Որ ոչ րաւեալ
Դարձուցանել ի գլխոյ եղբարցս
Ջշանթընկեց ամպրոպացն սպառնալիս
Առ սէր նոցին.

¹⁵ Նույն տեղում։

¹⁶ «Պատմություն Հայկաի ազգային գերեզմանատանց և արձանագիր հայերեն տապանաքարերու», արձանագրեց Արտ. Սյուրմեյան, Հալէպ, 1935, էջ 17։

¹⁷ «Ազգագրական հանգես», 1901, էջ 60։

¹⁸ Երեմիա Չելեպի Քյոմուրճյան, Ստամպուլի պատմություն, էջ 294։

Մատուցի եւ զիմանմեղ պարանոց
 Եւ պարանեցայ ի նոյն մորիկ՝
 Միքայելս Տիւզեան,
 Յանհաս խորհրդոց երկնից
 Հարուածեալ անմեղութիւն:
 Հայեաց յայս մահ անպարտական
 Դիր ափի բերան...¹⁹

Հալածանքներն ու սոցիալ-քաղաքական ճնշումները սովորական էին Արեւմտյան Հայաստանում ու հայկական գաղթավայրերում հատկապէս XVIII—XIX դդ. Գ. Սրվանձտյանցը գրում է. «Կարի երկյուղով պաշարյալ են հայք. ո՛չ իրենց իրավունքը, և ո՛չ իրենց կրոնքը կրնան համարձակ խոստովանիլ: Եթե այսպէս ապրին, լավ է չապրին»²⁰: Մեկ այլ բնորոշմամբ՝ «մեր գավառաբնակ անմեղ հայերը ուղղակի կամ անուղղակի տեղ-տեղ ինչ հալածանքներ, տառապանքներ և նեղություններ կկրեն Տաճկաստանի օրենքները չի ճանչցող այն բարբարոս անօրինաց ձեռքեն, որ հիրավի ճշմարիտ հայու արյուն կրող սիրտ մը չի դիմանար»²¹:

Օրթագյուղում (Կ. Պոլիս) ստեղծվել է մի վիմագիր բանաստեղծություն, ուր պատկերված են թուրք արյունարբու ենիչերիների ձեռքով 1822 թ. գազանաբար ու կամայականորեն խոշտանգված Պապայան Հովհաննեսի ողբերգական մահվան մանրամասները: Զոհվածը դիմելով ողբերգության մուսա Մելիքմենեհին, հետևյալ կերպ է պատկերում իր վիճակը.

Մելպոմենէ՛ ցաւոց մարդկան դու թարգման.
 Ի յերդ զիմ մահ արի առնուլ տխրական.
 Լալոյ առիթ իմ այս արկած եւ սրգոյ՝
 Զի տարապարտ զոհ ես եղէ երկաթոյ...²²

Սրի (երկաթի) զոհ գնացած Հովհաննեսը խուլ բողոքի ձայնն է բարձրացնում կատարվածի դեմ.

Դարանակալք կենացս զի՞նչ շահ ձեզ աղէ,
 Կամ ո՞ր օգուտ, եղուկ յանպարտ արենէ.
 Օգուտ ոչ մի, այլ պատուհաս մշտական,
 Իսկ ինձ յեթերս յաւերժ կենաց բաժին կայ...²³

Բանաստեղծության հեղինակը լավ է հասկացել, որ ենիչերիների ամենանողկալի շարագործություններն անգամ մնում են անպատիժ:

Հայ ժողովուրդը շատ անգամներ է ընդվզել օսմանյան կայսրության սանձազերծած հալածանքների ու բռնությունների դեմ, զենքի ուժով փորձել դուրս

¹⁹ «Բաղմավէպ», 1930, էջ 175:

²⁰ Գ. Սրվանձտյանց, Թորոս Աղբար Հայաստանի ճամբորդ, մաս առաջին, Կ. Պոլիս, 1879, էջ 318:

²¹ Պ. Նաթանյան, Տեղագրություն Սյուրիհիսարու, Կ. Պոլիս, 1872, էջ 21:

²² Երեմիա Զեւեպի Քյոմուրճյան, նշվ. աշխ., էջ 684:

²³ Նույն տեղում:

գալ դարավոր մղձավանջից: Թեև այդ պայքարը հաճախ չի պսակվել հաջողությամբ, սակայն Հայաստանի որոշ շրջանների բնակիչներին հաջողվել է պայքարի միջոցով հասնել կիսաանկախ դրության: Այդ տեսակետից ուշադրության արժանի է 1736 թ. վիմադիր մի բանաստեղծություն՝ նվիրված Մելիք Շահնազարի որդուն՝ Մելիքին: Մելիքը իր ժողովրդի համար կատարած մեծագործությունների համար դարձել էր «թագ, պարծանք հայոց ազգի»: Տեր դառնալով հայրենի վարանդային, նա կարողացել է երկիրը աղատել օսմանյան կայսրությանը հարկատու վիճակից: Այսպիսին է հերոսի նկարագիրը.

Սա էր հացով, սեղանով լի,
Ողորմեր մամեն ազգի.
Կերպարանօքն էր գովելի,
Թագ, պարծանք էր հայոց ազգի.
Յոյժ կոդորեաց ազգէն դաշկի,
Պատերազմեաց յետ օսմանցի.
Սա ոչ ետ հարկ թագաւորի,
Ամուր պարիսպ էր աշխարհի...²⁴

1820 թ. ժողովրդի հոծ բազմության առջև, դահիճների ձեռքով, գլխատվում է պոլսահայ իրականության նշանավոր դեմքերից մեկը՝ Սախալյան Գրիգոր իշխանը, որը հայկական միջավայրում հայտնի էր իր ազգանվեր գործունեությամբ: Թուրքական իշխանությունների կողմից նա հալածանքների է ենթարկվում այն պարզ պատճառով, որ արհամարհելով սպառնացող վտանգը, պաշտպան ու նեցուկ է կանգնել հարազատ ժողովրդին: Թուրք իշխանավորները, որպես պատիժ, ժերոնազարդ իշխանին մատնում են մոլեռանդ խուժանի ձեռքը՝ ապա նետում բանտ՝ տանջահարության, անարգման ու գանակոծության:

Գրիգոր իշխանը կանխազգալով, որ բռնակալները առիթ են որոնում բռնությունների ու հալածանքների ենթարկելու հարազատ ժողովրդին, իր վրա է վերցնում ազգի գլխին կախված վտանգը՝ «Կամօք յանձն էառ ըզվտանգ ազգին» և իր կյանքն ու անձը զոհաբերում է հանուն իր ժողովրդի անվտանգության:

Տեսլեամբ փառաւոր՝ մեծատոհմ իշխան,
Սատար նեղելոց՝ որբոց օգնական.
Բանից սուրբ գրոց՝ հըմուտ բաւական,
Լուսաւորչաւանդ՝ կըրօնից պաշտպան.
Ուստի մատնեցաւ յամբոխէ խուժան,
Բանտից տանջանաց ի դահճաց դաժան,
Կամօք յանձն էառ ըզվտանգ ազգին,
Գլխատեալ հհեղ զարիւն իւր անգին՝
Ի դուռն ժամու սուրբ Աստուածածին...²⁵

Գրիգորին գլխատում են Կ. Պոլսի հայոց ս. Աստվածածին եկեղեցու դռան առջև՝ ի ցույց ու սարսափ յուրայիններին:

²⁴ «Դիվան հայ վիմագրության», պրակ. 5 (անտիպ):

²⁵ Ն ր Ե մ Ի ա Չ Ե Լ Ե պ Ի Ք յ ո մ ո ւ ր ճ յ ա ն, նշվ. աշխ., էջ 337:

Հուգի է նաև հաշատուր Պաստրմաճյանին նվիրված վիմագիր բանաստեղծությունը (1872), ուր պատկերված են նրա ազգանվեր գործունեությունն ու մահվան հանգամանքները, իր բարեգործությունների շնորհիվ հաշատուրը հայ հասարակության աչքում հռչակվել է իբրև «աստղ պայծառ եւ ինքնալոյս», «մեծագործ» ու «շինարար»։ Եվ շուտով քինախնդիր թշնամին իր սև գործը տեսնում է. դավադրարար սպանվում է հաշատուր իշխանը.

Ավա՛ղ, նախանձ թշնամույն խաշին
 Ի մի զարկ ատրճանակի լայնաբերան,
 Բարձ զկեանս ազգասիրիս,
 Որ որբոց եւ ալրիաց էր կյանք
 Եւ պաշտպան...²⁶

Հայրենիքը ազատ ու անկախ տեսնելու իդեալը հանգիստ չի տվել նաև նոր ջողայեցի Շամիրի կրտսեր որդուն՝ Հակոբին։ Օտարության մեջ իր մահկանացուն կնքած, հայրենիքի ազատությունը շտեպած մարդու խոր մտորումներ կան Հակոբին նվիրված բանաստեղծության մեջ.

Ողջույն քեզի, որ կընթեռնուս
 Տապանա՛գիրն իմ շիրիմիս,
 Պատմէ ինձի լուրեր, խօսէ
 Ազատութեանը մասին,
 Մարգերուն իմ հայրենիքիս,
 Որու վրան այնքա՛ն լացի.
 Ըսէ ինձի՝ արդեո՞ք ելաւ
 Անոնց մեջէն քաջալաւ
 Պահապան մ՝ որ զիրենք ուղիղ
 Առաջնորդէ, պաշտպանէ՞²⁷,

Հակոբն իր ողջ կյանքում սպասել է ազատության օրվան, երբ հայ ժողովրդի ծոցից վերջապես կծնվի մի «բարի հովիվ», որը կկարողանա հսկել «հօտին վըրայ ցիրուցան»՝ այսինքն հայրենիքից օտարված հայերին համախմբել ընդդեմ թշնամու.

Զի ես իրաւ ըսպասեցի
 Բուր օրերն իմ կեանքին,
 Որ գար բարի հովիւ մ՝ հսկել՝
 Հօտին վըրայ ցիրուցան...²⁸

Հակոբը ցավում է, որ դաժան ճակատագիրը իրեն նետել է հեռավոր Մարարաքթա, և այդ օտար երկիրը առհավետ «իր ծոցին մեջ պիտի պահէ» իր նշխարները՝ հայրենիքի կարոտն իր հոգում, հայրենի երկրի ու ժողովրդի ազատությունը շտեպած։ Ծիշտ է, Հակոբին չի վիճակվել տեսնել հայրենիքն

²⁶ Հ. Քոսյան, Բարձր Հայք, էջ 192.

²⁷ «Բազմավէպ», 1931, էջ 501.

²⁸ Նույն տեղում.

ազատ ու անկախ, բայց նրա հավատը չի մեռել նրա հետ, այլ իբրև քարացած մի իղձ ու երազանք մնացել է սերունդներին ի տես: Հակոբը «իր դամբարանի խորէն կը հարցապնդէ անցորդները իր հայրենիքի մարդոց ազատութեան մասին...»²⁹:

Այսպիսով, դատելով քննված և քննելի բանաստեղծություններից՝ կարելի է ասել, որ հայ վիմագիր բանաստեղծությունը, հիրավի, ներկայացնում է ոչ միայն գրական արժեք, այլև նույն ժողովրդի պատմության տվյալ շրջանը լուսաբանող յուրահատուկ սկզբնաղբյուր:

О НЕКОТОРЫХ ЛАПИДАРНЫХ СТИХОТВОРЕНИЯХ

С. А. ГЕВОРКЯН

Р е з ю м е

В ряду поэтических произведений лапидарные стихотворения выделяются своеобразной тематикой, оригинальностью поэтического мышления и выразительностью. В них отражена в основном жизнь армян, борющихся за сохранение своих национальных традиций, обычаев, религии.

Анализ лапидарных стихотворений показывает, что они представляют собой не только литературную ценность, но и служат источником для изучения истории армянского народа определенного исторического периода.

²⁹ «Բազմալէս», 1932, էջ 501: